



Ազդարարության Trumpet's Sound **փող**

51-րդ ՏԱՐԻ, ԱՎԱՏՐԱԼԻԱ
ՀՈՆԿԱՐ - ՓԵՏՐԿԱՐ 2020





Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱՋԳ-ԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ Իովիվ Հրաչ Գույունյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Ցանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերը մինչև այստեղ մեզ օգնեց Հովիվ՝ Հրաչ Գույունյան

Ինձ հետ գործ չունես Գառնիկ Արբելյան

Իսահակի զոհաբերությունը Դոն Սթորմըր

Նեղության մեջ գոհություն Ե. հուրի

Եկեղեցու պատմությունը (9) QMBC պանորամա

Ոսկե կանոնը Բաֆֆի Չախարյան

Ազատագրված բանտարկյալը Քաղված

Հավատացյալի կյանքը Վեր.՝ Հովսեփի Հովսեփյան

Ինձ մոտ բերեք նրան Քաղված

Հիսուսը՝ աշխարհի լույսը Վարդան Սարգիսյան

Տերը մինչև այստեղ մեզ օգնեց

**«Այն ժամանակ Սամուելը մի քար վերցրեց և կանգնեցրեց
Մասփայի ու Սենի միջև ու այն Արեն-եզեր կոչեց՝
ասելով. «Տերը մինչև այստեղ մեզ օգնեց»»
(Ա Թագ. 7:12)**

Արդյոք կարո՞ղ ենք մի քար վերցնել և նույնը անել: Մենք հիշում ենք Տիրոջ բարությունը մեր նկատմամբ: Շատերը մեզ հետ սկսեցին տարին, բայց այսօր այստեղ չեն, շատերը առողջ սկսեցին, բայց հիվանդությունով ավարտեցին, շատերը հարստությունով սկսեցին, բայց կորուստներով ավարտեցին:

Հավատացյալի կյանքի յուրաքանչյուր պարագա Աստծո կողմից թույլատրված է: Անցյալ տարվա վիճակագրությունները ցույց են տալիս, որ ունեցել ենք 300 բնական աղետ, հրդեհ, երաշտ, անձրև, երկրաշարժեր, հրաբուխներ, ավելի քան 40 միլիարդ դոլարի վնաս, 5000 զոհ և իրենց տները կորցրած 22 միլիոն մարդ:

ՏԵՐԸ մինչև այստեղ մեզ օգնեց

Անցյալ տարվա մասին խորհելիս գիտակցում ենք, որ շատ սխալներ ենք թույլ տվել, սակայն որպես հավատացյալներ՝ պետք է միշտ և ամեն բաների համար շնորհակալություն հայտնենք: Մենք պետք է ամեն բանի Աստծո տեսանկյունից նայենք և ինքներս մեզ հարց տանք, թե ի՞նչ կարող ենք սովորել դրանից: Արդյոք տեսնո՞ւմ են Աստծո ձեռքն ինձ պատահածի մեջ, արդյոք Քրիստոսի մեջ աճելու համա՞ր էր...:

Հիշե՛ք, որ Իսրայելը 40 տարի քայլեց՝ ցերեկը առաջնորդվելով ամպի, իսկ գիշերը՝ կրակե սյունով: Բայց բոլոր իսրայելցիները ձախողվեցին իրենց ընթացքի մեջ: Հիշե՛ք Մովսեսի խոսքերը. «Եթե Քո ներկայությունն Ինձ հետ չգնա, մեզ այստեղից մի՛ հանիր» (Ելից 33:15):

Հավատացյալները ինչպե՞ս պետք է դիմավորեն Նոր տարին.

1. Տիրոջը վստահելով

«Եվ հիմա ահա, ես հոգով կապված, Երուսաղեմ եմ գնում, և չգիտեմ, թե այնտեղ ինձ ինչ կպատահի» (Գործք 20:22): «Եղբայրներ, ես չեմ համարում, թե արդեն հասել եմ, բայց այս մի բանն անում եմ, որ ետևում մնացածները մոռացած՝ առջևում եղածներին եմ ձգտում» (Փիլիպ. 3:13):

2. Ինքնաքննությամբ

«Զննի՛ր ինձ, ո՛վ Աստված և իմացի՛ր իմ սիրտը. փորձի՛ր ինձ ու իմացի՛ր իմ մտածումները և տե՛ս, թե արդյոք որևէ կորստյան տանող շարժառիթ կա՞ իմ մեջ, և ինձ հավիտենական ճանապարհով առաջնորդի՛ր» (Սաղ. 139:23-24):

3. Մեր ճամփաները փոխելով

«Իսկ եթե ձեր ճանապարհներն ու գործերն ամբողջովին վերափոխեք, եթե իսկապես արդարություն անեք մարդու ու նրա դրացու միջև, եթե օտարին, որբին ու որբևայրուն չզրկեք և անմեղ արյուն չթափեք այստեղ, ո՛չ էլ, ի վնաս ձեզ, ուրիշ աստվածների հետևեք. այն ժամանակ թույլ կտամ, որ բնակվեք այստեղ՝ այս երկրում, որ հավիտյանս հավիտենից ձեր հայրերին տվեցի» (Երեմ. 7:5-7):

«Աղաչո՛ւմ եմ ձեզ, եղբայրներ, Աստծո ողորմությամբ, որ ձեր մարմինները ներկայացնեք որպես կենդանի զոհ, սուրբ, Աստծուն ընդունելի, որ ձեր իմաստալից պաշտամունքն է: Եվ մի կերպավորվեք այս աշխարհի կերպարանքով, այլ նորոգվեք ձեր մտքի նորոգությամբ, որ քննեք, թե ո՞րն է Աստծո կամքը՝ բարին, ընդունելին և կատարյալը» (Հռոմ. 12:1-2):

4. Նոր որոշումներ կայացնելով

«Զո ականջները քո ետևից մի խոսք են լսելու, որ ասում է. «Մա է ճանապարհը, սրանով գնացեք, երբ աջ կողմ թեքվեք, և երբ՝ դեպի ձախս»» (Ես. 30:21):

«Զո խոսքը ճրագ է իմ ոտքերին ու լույս՝ շավիղներիս» (Սաղ. 119:105):

5. Հիսուսին հուսալով

«Արդ, հույսի Աստվածը թող ձեզ ամենայն բերկրությամբ ու խաղաղությամբ լցնի, ձեր հավատալով, որպեսզի Սուրբ Հոգու գործությամբ հույսով առատանաք» (Հռոմ. 15:13):

«Օրհնյա՛լ լինի Աստված և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրը, որ Իր առատ ողորմությամբ մեզ վերստին ծնեց կենդանի հույսի համար՝ Հիսուս Քրիստոսի մեռելներից հարություն առնելովը» (Ա Պետ. 1:3):

Հ. Գ.



Ինձ հետ գործ չունես

- 1. Դա անբիծ և սուրբ, անարա՛ն Հիսուս,
Որ ներող, գթող, խաղաղություն ես:
Ես՝ չար, Դու՝ բարի, ես՝ խավար, Դու՝ լույս,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

- 2. Դու ուզում ես իմ ընկե՞րը լինել,
Դու, որ միշտ հաղթում ու հաղթություն ես:
Ես չեմ դադարում մեղքերս ամբարել,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

- 3. Ինձ հետ ճանապա՞րհ ես ուզում գնալ,
Որ կյանք, ճանապարհ, ճշմարտություն ես,

Իսկ ես սովոր եմ ցեխի մեջ մնալ,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

4. Հոգով մեռածիս ուզում ես կյա՞նք տալ,
Հարյար մեռելոց և հարություն ես,
Ես արդեն հող եմ փտած ու հոտած,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

5. Կամենում ես ինձ Երկի՞նք հասցնել,
Իմ բարի Աստված, ողջ բարության ես:
Ինձ՝ անառակիս, հրեշտա՞կ դարձնել,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

6. Իմ հանդերձները կեղտոտ, պատռված,
Նոր զգեստնե՞ր ես ուզում հագցնել:
Ինձ համար պարարտ ե՞զ է մորթված,
Աղերսում եմ Քեզ, ինձ հետ գործ չունես:

7. Բայց, միևնույնն է, Դու սեր ես, գիտեմ,
Եվ խաղաղության խորհուրդներ ունես,
Դու ինձ ապագա և հույս կընձայես,
Ինձ հետ Դու հսկա ու մեծ գործ ունես:

Գառնիկ Արրեյան

Իսահակի զոհաբերությունը

(Կարդացե՛ք Ծննդոց 22-ը)

Իսահակի զոհաբերությունը Աբրահամի կյանքի ամենահայտնի պատմություններից է: Սա նաև այն իրադարձությունն է, որի ժամանակ Աբրահամի հավատքը մեծապես խորացավ:

Պատմությունը սկսվում է անորոշ ժամանակի հետևյալ արտահայտությամբ. «Եվ եղավ որ այս ամենից հետո...»: Մենք հստակ չգիտենք, թե երբ, սակայն վստահ գիտենք, որ այս ամենը տեղի ունեցավ Իսահակի մեծանալուց հետո, քանի որ պատմությունից հասկանում ենք, որ նա բավական մեծ էր կատարվածը հասկանալու համար: Աստված Աբրահամին երևաց՝ նրան փորձելու համար: Աստված Աբրահամին հրամայեց իր որդի Իսահակին՝ որպես ողջակեզի զոհաբերել այն լեռներից մեկի վրա, որը Ինքը ցույց պիտի տար Աբրահամին:

Աստված Իսահակին նկարագրեց որպես Աբրահամի սիրած միակ որդու: Ի՞նչ է նշանակում սա: Մեծ նշանակություն ունի Իսահակի՝ Աբրահամի միակ սիրելի որդի լինելը: Մենք գիտենք, որ Աբրահամը ուրիշ որդիներ ևս ուներ. Իսմայելի մասին արդեն շատ է խոսվել: 25-րդ գլխում կարդում ենք Քետուրայից ունեցած իր մյուս որդիների մասին: Այնուամենայնիվ, Իսահակը հատուկ տեղ ուներ Աբրահամի կյանքում. նա «միակ որդին» էր:

Ի՞նչ մտքեր անցան Աբրահամի մտքով, երբ Աստված հրամայեց նրան միակ որդուն զոհաբերել: Նա տարիներ սպասել էր Իսահակի լույս աշխարհ գալուն: Աստված նրան ասել էր, որ խոստումները Իսահակի միջոցով պիտի կատարվեն: Բայց Իսահակը դեռևս ամուսնացած չէր, զավակներ չուներ, որոնց միջոցով խոստումները պիտի իրականանային: Եթե Աբրահամն իր միակ որդուն զոհաբերեր, ապա ի՞նչ կլիներ Աստծո տված բոլոր խոստումների ճակատագիրը:

Այնուամենայնիվ, Աբրահամը անմիջապես հնազանդվեց: Սուրբ-գրային հատվածում ոչ մի նշույլ չկա այն մասին, որ Աբրահամը

հարցաքննեց Աստծուն կամ կասկածներ ունեցավ իր անելիքի վերաբերյալ: Պարզապես հաջորդ օրը՝ վաղ առավոտյան, Աբրահամը իր ավանակի համետը դրեց, երկու ծառա ու Իսահակ որդուն վերցրեց, նաև ողջակեզի համար անհրաժեշտ իրերը՝ փայտը, դանակը, կրակը, ու ճամփա ընկավ դեպի այն տեղը, որտեղ Աստված իրեն ցույց պիտի տար:

Հետաքրքրական է, թե Սառայի մտքով ինչեր անցան, երբ փոքր խումբը ճամփա դուրս եկավ: Եթե Աբրահամի մտքերը հետաքրքրում են մեզ, ապա երկար փնտրելու կարիք չունենք. երրորդ օրը Աբրահամը խոսում է իր ծառաների հետ: Նա տեսել էր այն վայրը, որտեղ Աստված ուզում էր, որ գնար: Նա իր երկու ծառաներին ասաց. «Դուք այս էշի հետ այստեղ մնացե՛ք, ես և տղան մինչև այնտեղ կգնանք և պաշտամունք կմատուցենք, և ձեզ մոտ կվերդառնանք»: Աբրահամը կասկած չունե՛ր պատահելիքի վերաբերյալ. Իսահակի հետ միասին պիտի վերադառնային ծառաների մոտ:

Եբրայեցիներին ուղղված նամակի հեղինակը այսպես է նկարագրում Աբրահամի վերլուծությունը:

«Հավատով Աբրահամը, երբ փորձվեց, Իսահակին գոհ մատուցեց. նա, որ խոստումներն էր ստացել, իր մեկ հատիկ որդուն մատուցեց, որի մասին ասվել էր, թե «Իսահակով քո սերունդը կկոչվի»՝ մտածելով, որ Աստված կարող է նրան նույնիսկ մեռելներից հարություն տալ. որտեղից էլ որպես պատկեր ստացավ նրան» (Եբր. 11:17-19):

Աբրահամն ու Իսահակը սկսեցին բարձրանալ այնտեղ, որտեղ Աստված ասել էր Աբրահամին, որ գնար: Իսահակը տեսնում էր փայտն ու կրակը, բայց գոհաբերություն անելու գառ չունեին: Այդ ընթացքում ինչ-որ պահի նա հարցրեց հորը. «Որտե՞ղ է ողջակեզի գառը»: Այս հարցը ցույց է տալիս, որ Իսահակը ծանոթ էր գոհաբերություն անելու սովորությանը: Հարցին ի պատասխան՝ Աբրահամն ասաց, որ Աստված Իր համար ողջակեզ լինելու գառը ասպհովելու է:

Աբրահամի պատասխանը տարբեր մեկնություններ ունի: Ըստ սովորական մեկնության՝ Աստված տրամադրելու էր գոհաբերության

գառը: Եվ այդպես էլ եղավ: Աբրահամը խիտ մացառներում եղջյուրներից բռնված մի խոյ տեսավ: Այսպես Աստված Իր համար գառ ապահովեց: Հատվածը կարելի է նաև այլ կերպ ընթերցել. Աստված Ինքն Իրեն որպես գառ տրամադրեց: Եթե մտածենք ոչ միայն այդ մեկ օրվա իրադարձության մասին, ապա առաջ նայելով՝ կտեսնենք այն ժամանակը, երբ Աստված Հիսուս Քրիստոսի Անձով աշխարհ եկավ և Ինքն Իրեն որպես Աստծո Գառ տրամադրեց:

Սրա մասին քարոզեց Հովհաննես Մկրտիչը: Երբ տեսավ Հիսուսին, որ իրեն էր մոտենում, նա ասաց. «Ահա Աստծո Գառը, որ վերցնում է աշխարհի մեղքը»: Հովհաննես Մկրտիչը, ինչպես բոլոր իսրայելացիները, ծանոթ էին գոհաբերական համակարգին, մեղքերը քավելու համար գոհեր բերելուն: Իսրայելացու մեղքը կարող էր ծածկվել, քանի որ անմեղ գոհը կրում էր մեղավորի պատիժը:

Սրա մեջ կարևոր հոգևոր ճշմարտություն կա: Մեղքի վարձքը մահ է: Մեղքի պատիժը մահ է: Ես կարող եմ իմ մեղքերի համար մեռնել, բայց դրա արդյունքը հավիտենական մահ կլինի, այսինքն՝ հավիտենական բաժանում Աստծո ներկայությունից: Բայց հնարավոր է, որ ուրիշը կրի իմ պատիժը, ով անմեղ է, որևէ մեղք չի գործել, որի համար քավության կարիք ունենա: Ահա թե ինչու Տեր Հիսուս Քրիստոսը Աստծո Գառ կոչվեց: Նա է Աստծո Գառը, ով վերցրեց աշխարհի մեղքը:

Փոխանորդական մահը ճշմարտություն է, որը ցուցադրվեց Մորիա լեռան վրա: Իսահակի համար փոխարինող գտնվեց. իր փոխարեն խոյը գոհվեց: Մենք արժանի էինք հավիտենական մահվան, բայց Աստծո Գառը դարձավ մեզ փոխարինողը: Մենք ազատ արձակվեցինք Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքի միջոցով:

Երբ Աբրահամը դանակը բարձրացրեց Իսահակին սպանելու համար, Տիրոջ հրեշտակը երկնքից կանչեց՝ ասելով. «Աբրահամ, Աբրահամ»: Անվան կրկնությունը սովորական չէր, այն հրավիրում էր հրատապ ուշադրություն: Երբ Աբրահամը պատասխանեց, Հրեշտակն ասաց. «Հիմա իմացա, որ դու վախենում ես Աստծուց, և քո

մեկ հատիկ որդուն չխնայեցիր Ինձնից»։ Աբրահամը կատարելապես հնազանդվեց Տիրոջը։

Հետաքրքրական է, թե ո՞վ էր Տիրոջ Հրեշտակը (կամ հրեշտակը)։ Սկզբում գուցե խորհենք, թե նա հրեշտակ էր, բայց հետո կտեսնենք, որ Նա խոսում է որպես Աստված. «... Մեկ հատիկ որդուն չխնայեցիր Ինձնից»։ Նա այն Անձն էր, ով երևաց Աբրահամին, երբ վերջինս օրվա տաք ժամին նստած էր իր վրանի մուտքի մոտ։ Տեր Հիսուս Քրիստոսը Հին Կտակարանի ժամանակներում հաճախ հայտնվել է որպես Տիրոջ Հրեշտակ։

Ինչո՞ւ Աբրահամը ենթարկվեց այս փորձությանը։ Աստված գիտեր Աբրահամի հավատքի զորությունը, բայց Աբրահամը չգիտեր։ Այսպես նա իմացավ իր ունեցած հավատքի զորության չափը։ Եթե Աբրահամը այս կերպով չփորձվեր, ապա մենք երբեք չէինք իմանա նրա հավատքի զորության մասին։ Մեր առջև դրված է շատ հզոր հավատքի օրինակ։

Աբրահամը պատրաստ էր իր որդուն զոհաբերելու։ Նա տեղյակ չէր, որ Աստված թույլ չէր տալու իրեն Իսահակին սպանել։ Շատ բաներից անտեղյակ լինելով՝ Աբրահամը վստահեց Աստծուն, ով խոստացել էր Իսահակի միջոցով Իր խոստումները կատարել։ Նա գիտեր, որ Աստված ասել էր, որ Իսահակի միջոցով սերունդ պիտի ունենար, և որպեսզի Աստված կատարեր Իր խոստումը, Նա Իսահակին մեռելներից պիտի հարուցաներ։ Աստված Աբրահամին խոստացել էր, և նա կասկած չուներ, որ Աստված հավատարիմ պիտի գտնվի Իր խոստումների մեջ։ Աբրահամի միակ գործը Աստծուն վրստահելն ու Նրան հնազանդվելն էր։

Դոն Սթորմըր



Նեղության մեջ գոհություն

Պատմվում է, թե Պուրենի պատերազմում անգլիական զորաբանակի հրամանատարը իր զինվորներին պատվիրեց Պուրենի գյուղերի բոլոր տներն ու ագարակները հրկիզել և բոլոր բնակիչներին գերի տանել, նույնիսկ կանանց ու մանուկներին: Ջորապետերից մեկի հրամանատարության տակ գտնվող հետևակը ագարակի տներից մեկը հրկիզելու հրաման ստացավ: Այս հրամանը խիստ դաժան էր նրանց համար: Երբ այնտեղ հասան, տան մեջ գտան մի մայր իր մի քանի զավակների հետ: Հայրը գնացել էր անգլիացիների դեմ պատերազմելու: Ջորապետը նրանց տունը այրելու և նրանց գերի տանելու լուրը հաղորդելուց հետո երկու ժամ ժամանակ տվեց, որպեսզի տնից հանեն այն, ինչ կարող են: Ջինվորներին էլ պատվիրեց, որ օգնեն նրանց: Երբ որոշյալ ժամանակը լրացավ, մեծ աղջիկը, զորապետի հետ անգլերեն խոսելով, խնդրեց, որ թույլ տա երգեհոնն էլ դուրս հանել, որ բարեկամի կողմից նվեր էր իրեն: Նրա խնդրանքը ընդունվեց, և զինվորները, դուրս հանելով երգեհոնը, տան դիմաց դրին: Այն ժամանակ զորապետը հրամայեց այրել տունը: Երբ կարմիր բոցերը դեպի երկինք էին բարձրանում տունը կործանելով, աղջիկը իսկույն երգեհոնի դիմաց նստեց և սկսեց 146-րդ սաղմոսը նվագել:

«¹Փռաբանի՛ր Տիրոջը, օրհնի՛ր Տիրոջը, ո՛վ իմ անձ: ²Տիրոջն են օրհնելու քանի դեռ ապրում եմ, սաղմո՛ս եմ երգելու իմ Աստծուն, քանի կամ: ³Մի՛ հուսացեք իշխաններին, ոչ էլ մարդու որդուն, ում մոտ փրկություն չկա: ⁴Նրա հոգին ելնում է, նա իր հողն է վերադառնում, այդ նույն օրը կորչում են նրա մտածումները: ⁵Երանի՛ նրան, ում օգնականը Հակոբի Աստվածն է, ում հույսը իր Տեր Աստծո վրա է, ⁶որ երկինքն ու երկիրը, ծովն ու նրա մեջ բոլոր եղողներին ստեղծեց. Նա, Ով հավիտյան պահպանում է ճշմարտությունը, ⁷արդար դատաստան է տեսնում զրկվածների նկատմամբ ու հաց է տալիս սովածներին: Տերն արձակում է բանտարկյալներին. ⁸Տերը բացում է կույրերի աչքերը, Տերը ոտքի է կանգնեցնում ցած խոնարհվածներին, Տերը սիրում է արդարներին. ⁹Տերը պահպանում է պանդուխտ-

ներին, ընդունում է որբին ու որբեայրուն, բայց ամբարիշտների ճամփան շրջում է: ¹⁰Տերը թագավորելու է հավիտյան՝ Քո Աստվածը, ո՛վ Սիոն, սերնդից սերունդ: Փառաբանեցե՛ք Տիրոջը»:

Երբ աղջիկը նվագում էր այս սաղմոսը, տան անդամները, նրա շուրջ հավաքված, ցնծությամբ երգում էին, իսկ դիմացը իրենց տունն էր այրվում: Անգլիական զինվորները, հանելով իրենց զլխարկները, կատարյալ հարգանքով կանգնած էին այս լուրջ տեսարանի առջև:

Երանի այն մարդուն, ով եթե իր երկրավոր տունը քանդվի, Տիրոջով խաղաղություն է գտնում և գոհություն է մատուցում Նրան: «Որովհետև, Նրան՝ Ով չգիտեր մեղքը, Աստված մեզ համար մեղք դարձրեց, որ մենք Նրանում Աստծո արդարությունը դառնանք» (Բ Կորնթ. 5:1):

Այս տան անդամները իրապես հույսը դրել էին իրենց երկնային տան վրա և սովորել էին նեղության մեջ գոհություն և փառաբանություն մատուցել Տիրոջը ոչ թե խոսքով, հապա գործնականապես: Հատկապես շատ գովելի է աղջկա փափագն ու բաղձանքը: Ինչպես անցյալում, նույնպես ներկայում կան այսպիսի ընտանիքներ ու մանուկներ. արդյոք հոգևոր ընտանիքո՞ւմ էլ կան այսպիսիները:

Սիրելի՛ մանուկ, չե՞ս ուզում դու նույնպես այդպիսին լինել:

Ե. Հուրի

«Ձեզ համար գանձեր մի՛ դիզեք երկրի վրա, որտեղ ցեցն ու ժանգը փչացնում են, և գողերը պատրը ծակելով՝ գողանում են, այլ ձեզ համար գանձեր դիզեցեք երկնքում, ուր ո՛չ ցեցը, ո՛չ էլ ժանգը կարող են փչացնել, և ո՛չ էլ գողերը կարող են պատրը ծակել ու գողանալ, որովհետև, ուր որ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի» (Մատթեոս 6:19-21):

Եկեղեցու պատմությունը (9)

Մ.թ. 1517-2000թթ.

5. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՐԱՇՐՁԱՆ (1914-2000 թթ.)

Երբ 1-ին համաշխարհային պատերազմը (1914-1918 թթ.) սկսվեց, որոշ ժամանակով հոգևոր արթնությունն ու ավետարանչությունը նահանջ ապրեցին: Բայց երբ խաղաղությունը վերադարձավ, աշխատանքը ավելի մեծ թափով վերսկսվեց:

20-րդ դարի սկզբին տարածված երևույթ էր լեզուներով խոսելը և սրա մասին արդեն խոսել ենք 31, 32 և 34-րդ դասերում: Ցանկության դեպքում կարող եք վերանայել այդ դասերը:

Հոգեգալստական շարժումը շեշտադրում է լեզուներով խոսելն ու բժշկությունները, բայց պետք է հիշել, որ այդ «պարզևները» Նոր Կտակարանում ներկայացված նույն պարզևները չեն: Հոգեգալստական շարժումն սկսվեց ԱՄՆ-ում 1905 թ.-ին, և հաջորդ 80 տարիների ընթացքում այն տարածվեց ամբողջ Եվրոպայում, Հարավային Ամերիկայում, Ավստրալիայում և շատ այլ երկրներում: Այսօր այն քրիստոնեական աշխարհում դեռևս գերիշխող է. օրինակ՝ Լատինական Ամերիկայում «Assemblies of God»-ը ունի մոտավորապես 20 միլիոն անդամ: Պետք է նշել, որ Հոգեգալստական շարժումը տարբերվում է Կաթոլիկ և Բողոքական ուղղություններից, սակայն դրա ուսմունքը ներթափանցել է բազմաթիվ դավանանքների մեջ:

20-րդ դարի առաջին կեսին բուռն բանավեճեր էին տեղի ունեցել ֆունդամենտալիզմի և լիբերալիզմի միջև: Հոգևոր հարցերի վրա կենտրոնանալու փոխարեն եկեղեցու առաջնորդները կենտրոնացել էին ոչ կարևոր հարցերի վրա, ինչպիսիք են էվոլյուցիան և սոցիալական խնդիրները: Սակայն գտնվեցին ոմանք, ովքեր շեշտադրում էին սուրբգրային վարդապետության կարևորությունը: Նրանցից էր Կարլ Բարթնը (1886-1968 թթ.), որը սովորեցրեց, որ գերիշխան Աստված մարդկանց հետ խոսում է Իր գրավոր Խոսքի միջոցով:

Այնուհետև սկսվեց եկեղեցիները միացնելու շարժումը, և այդ նպատակով 1946 թ.-ին Ամստերդամում ստեղծվեց «Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը»: Սակայն ոչ բոլոր եկեղեցիների ներկայացուցիչներն էին ներկա. ոմանք կարծում էին, որ դա փոխզիջման ինչ-որ նախաձեռնություն է: Սակայն այս ժամանակներում եղան մասնաշաղկապներ, ինչպիսին է 1948 թվականին աստվածաշնչյան ընկերակցությունների միության ձևավորումը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ և հետո (1939-1945 թթ.) ուժեղ միություններ ստեղծելու նպատակով մի քանի եկեղեցիներ միաձուլվեցին իրար: Օրինակ՝ Քրիստոսի եկեղեցին Չինաստանում (1927 թ.), Քրիստոսի եկեղեցին Ճապոնիայում (1940 թ.) և Քրիստոսի եկեղեցին հարավային Հնդկաստանում (1947 թ.):

Հին ձեռագրերի հայտնաբերումը (օրինակ՝ Մեռյալ ծովի գալարները (1947 թ.)), Աստվածաշնչի նկատմամբ թարմ հետաքրքրություն առաջացրեց թե՛ որպես պատմական աղբյուր, թե՛ որպես Աստծո հայտնությունը մարդկությանը: Այլ լեզուներով Աստվածաշնչի թարգմանությունը նոր թափ ստացավ հիմնականում աստվածաշնչյան ընկերակցությունների, դրանց միությունների և Ուիքլիֆ աստվածաշնչյան թարգմանիչների ջանքերի շնորհիվ:

Այնուհետև եկավ մասսայական ավետարանչության ժամանակաշրջանը. Բիլլի Գրեմը (1918-2018 թթ.) հայտնի ավետարանիչ դարձավ: Նա իր ավետարանչական արշավներն սկսեց 1948 թ.-ին, իսկ 1950 թ.-ին սկսեց «Որոշման ժամը» խորագրով իր ռադիոհաղորդումների շարքը: Նա մասնաձեռքեր, գրքեր և ֆիլմեր հրապարակեց: Այս ավետարանիչների շարքին պատկանում է մասնաձեռքից հետո հայտնի Լուիս Պալաուն, ով ավետարանչական հսկայական արշավներ կազմակերպեց Լատինական Ամերիկայում (1966 թ.-ին): Նա աշխարհի տարբեր երկրներում դեռ շարունակում է մասնաձեռքի կազմակերպումը:

Այլ երկրներում քրիստոնեական ուսմունքը տարածվեց մասնաձեռքից հետո քրիստոնեական գրականության և շատ կազմակերպությունների աշխատանքների միջոցով, ինչպիսիք են՝ «InterVarsity Christian Fellowship (IVCF)»-ը և «International Fellowship of Evangelical Students»-ը:

«Campus Crusade for Christ»-ը հիմնադրվեց 1951 թ.-ին, որը մեծապես խթանեց «Հիսուս» ֆիլմի տարածումը: Այս ֆիլմը այժմ հասանելի է մոտ 250 լեզուներով և օրական դիտվում է շուրջ կես միլիոն մարդկանց կողմից:

Չմոռանանք նաև ռադիոյի դերի մասին Քրիստոսի Ավետարանի բարի լուրը փակ երկրներում գտնվողներին հասցնելու գործում: Նրման ռադիոկայաններից է «HCJB»-ին և «TWR»-ը՝ համաշխարհային կազմակերպություն, որը շաբաթական ավելի քան 1500 ժամ քրիստոնեական ծրագրեր և Աստվածաշնչի սերտողություններ է հեռարձակում շատ երկրներում:

Ժամանակն ավարտվում է: Ավետարանի բարի լուրը տարածվում է մինչև Երկրի հեռավոր ծայրերը, Տեր Հիսուսը շուտով պիտի վերադառնա Իրեններին վերցնելու համար: Նա ասաց. «Դ՛ուրս եկ՝ մայրուղիներն ու ցանկապատների առաջ և համոզվի՛ր, որ ներս գան, որպեսզի տունս լցվի» (Դուկ. 14:23): Հովհաննես առաքյալն իր տեսիլքում տեսավ բոլոր ցեղերից, լեզուներից, ժողովուրդներից ու ազգերից Քրիստոսի արյունով փրկագնվածներին (Հայտ. 5:9):

6. ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

Ավարտեցինք եկեղեցու պատմության մեր կարճ ուսումնասիրությունը՝ սկսած 100 թ.-ից մինչև 20-րդ դարի սկիզբը: Ընթերցողը կարիք չունի մանրամասնորեն հիշելու յուրաքանչյուր տեղեկություն, բավարար է հիմնական իրադարձությունների ընդհանուր պատկերացումն ունենալը: Սակայն շատ կարևոր է այս իրադարձությունները քննել Աստծո Խոսքի լույսի ներքո:

Այս դասընթացում միասին ուսումնասիրեցինք վերջին հինգ դարերը՝ սկսելով Ռեֆորմացիայից (1517-1648 թթ.), որը աշխարհին դուրս բերեց խավար դարերից ու վերականգնեց որոշ արժեքավոր ճշմարտություններ: Ռեֆորմացիայի առաջնորդներից են Լյութերը, Չվինգլին, Կալվինը և Նոքսը: Կաթոլիկների և բողոքականների միջև կատաղի կռիվներ եղան, մասնավորապես Ֆրանսիայում և Նիդերլանդներում: Բայց դրանցից առաջ եկան մի քանի դավանանքներ, որոնք շարունակում են գործել մինչև օրս, օրինակ՝ Անգլիայի եկե-

ղեցին, Սկրտական եկեղեցին և Հոլանդական բարեփոխված եկեղեցին:

Այնուհետև հայտնվեցին մի շարք նոր համայնքներ ու քրիստոնեական աղանդներ, և ականատեսը եղանք գիտական և արդյունաբերական հեղափոխությունների: Ընդհանուր առմամբ, այդ հեղափոխությունները բացասական ազդեցություն ունեցան քրիստոնեության առաջընթացի վրա: Այնուամենայնիվ, դրական կողմն այն էր, որ մի քանի հոգևոր արթնություններ տեղի ունեցան, որոնց նպաստեցին Ուայթֆիլդ և Ուեսլի քարոզիչների «Մեծ արթնություն»-ը և «Ավետարանական արթնություն»-ը: Շատ նորադարձներ լքեցին հաստատված եկեղեցիները ու կազմեցին նոր եկեղեցիներ, ինչպիսիք են Մեթոդիստական ու Ժողովական եկեղեցիները:

Չնայած Կարլ Մարքսի և Չարլզ Գարվինի գրվածքների ու Պիոս 9-րդ պապի պնդումներին ու ճնշումներին՝ բողոքականությունը շարունակեց տարածվել հաջորդ դարերում: Մենք հիշում ենք նաև «Salvation Army»-ի, «YMCA»-ի և Գ. Լ. Մուդիի մեծ ներդրումը քրիստոնեության առաջխաղացման գործում:

20-րդ դարը նշանավորվեց Հոգեգալստական շարժման վերելքով, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ձևավորմամբ, Բիլլի Գրեմի և այլոց մասսայական ավետարանչական արշավներով, Աստվածաշնչի և քրիստոնեական գրականության զանգվածային թարգմանությունով, ավետարանական կազմակերպությունների և ռադիոկայանների ստեղծումով:

- ՎԵՐՋ -



Ոսկե կանոնը

Մատթեոս 7:7-12

Մատթ. 7:7-ում Տեր Հիսուսը ամփոփում է Լեռան քարոզը: Նա այն սկսեց, երբ հավաքված ամբոխին սովորեցնելու համար լեռը բարձրացավ (Մատթ. 5:1-2): Քարոզում Նա ընդգծեց այն չափանիշները, որոնցով Իր հետևորդները պետք է ապրեն՝ սկսելով Երանելիներից (Մատթ. 5:3-12), շարունակելով սպանություն, շնություն, ամուսնալուծություն, վրեժխնդրություն չանելու պատվիրանով, անդրադառնալով թշնամիներին, երկնավոր գանձեր դիզելու և այնուհետև մարդկանց անարդարացիորեն չդատելու մասին թեմային (Մատթ. 7:1-6): Այս չափանիշների համաձայն ապրելը ոչ միայն դժվար է, այլև անհնար է, եթե Աստված չօգնի մեզ: Տեր Հիսուսը գիտի, որ մեր ուժերով չենք կարող այդպիսի կյանք ապրել:

Այդ պատճառով Հիսուսը նաև սովորեցրեց մեզ օգնություն խնդրել Հորից: Եթե ես և դուք խնդրենք, փնտրենք ու դուռը թակենք, ապա Աստված խոստացել է օգնել և մեզ այդ չափանիշին համապատասխան ապրելու կարողություն, ուժ և կամք տալ (Մատթ. 7:8): Մարդիկ հաճախ սխալ են մեկնաբանում սուրբգրային այս հատվածը: Այստեղ Հիսուսը մեզ չի սովորեցնում, թե Աստծուց ինչ որ խնդրենք, պիտի տա մեզ: Աստված ձմեռ պապ չէ, որին կարող ենք նամակ գրել ու ակնկալել մեր խնդրածը (մեքենա, տուն, ամուսին, աշխատանք և այլն): Այս հատվածը հատուկ կերպով սովորեցնում է հոգևոր բաների համար աղոթելը, մասնավորապես՝ Աստծո չափանիշներին համապատասխան քրիստոնեական կյանք ապրելու կարողությունը (տե՛ս նաև Դուկ. 11:13-ը): Սուրբ Հոգին օգնում է, առաջնորդում, սովորեցնում ու հիշեցնում է մեզ Տեր Հիսուսի Լեռան քարոզի ուսուցումները, որպեսզի կարողանանք Աստծո չափանիշներին համապատասխան կյանք ապրել:

Այնուամենայնիվ, մեր խնդրածը ստանալու համար կան որոշ պայմաններ: Առաջին՝ այս հոգևոր օրհնությունները ստանալու, այսինքն՝ Աստծո չափանիշին համապատասխան կյանք ապրելու կարողութ-

յունը ունենալու համար նախ անձը պետք է Աստծո հետ հարաբերություն ունենա (Հայր և որդի փոխհարաբերություն, Մատթ. 7:11): Միայն Քրիստոսին՝ որպես Փրկչի ընդունելու շնորհիվ անձը կարող է հարաբերություն ունենալ Աստծո հետ ու Նրան իր Երկնավոր Հայրը կոչել (Հովհ. 1:12): Ստանալու համար նախ պետք է խնդրել, սակայն միայն զավակը կարող է խնդրել իր Երկնավոր Հորից:

Հոգևոր օրհնություններ ստանալու հաջորդ պայմանը խնդրելն է, որը այս հատվածի գլխավոր միտքն է: Ուստի Հիսուսը երկրային հայրերի օրհնակը տվեց, հայրերի, որոնք կատարում են իրենց զավակների խնդրանքները: Նմանապես, մեզ պատվիրված է աղոթքով մեր Երկնավոր Հորից հոգևոր օրհնություններ խնդրել: Իրականության մեջ, ամենակարևոր բաները, որոնք խնդրում ենք մեր Երկնավոր Հորից, հոգևոր բաներն են: Սա է պատճառը, թե ինչու Հիսուսն ասաց. «Բայց առաջ խնդրեցե՛ք Աստծո թագավորությունը» (Մատթ. 6:33): Առաքյալները նույնպես սովորեցրին Հակ. 1:5-ը՝ հոգևոր իմաստություն խնդրելը, Եփես. 1:16-19-ը՝ հոգևոր խորաթափանցությունը և սրտի աչքերի լուսավորությունը, Կող. 1:9-10-ը՝ Աստծո գիտությանը լցվելը, Հռոմ. 10:1՝ մարդկանց փրկությունը, Ա Տիմ. 2:1-2՝ իշխանավորների համար աղոթելը, Եփես. 6:19-ը՝ համարձակ քարոզելը, և այլն...

Հոգևոր օրհնություններ ստանալու երրորդ պայմանը փնտրելն է: Միայն աղոթքը կամ միայն խնդրելը բավարար չեն: Մենք պետք է խնդրենք, այսինքն՝ աղոթենք, բայց նաև փնտրենք: Մենք պետք է փնտրենք Իր կամքը, հրահանգները, պատվիրանները, գիտությունը, որը կարող ենք ստանալ միայն Աստծո Խոսքից (Բ Պետ. 3:18, Հռոմ. 15:4, Բ Տիմ. 3:16): Մենք հոգևոր օրհնություններ չենք ստանա, եթե Աստվածաշունչ չկարդանք:

Աստծուց հոգևոր օրհնություններ ստանալու վերջին պայմանը դուռը թակելն է: Մենք պետք է խնդրենք (աղոթենք), փնտրենք (Աստվածաշունչը սերտենք), բայց նաև դուռը թակենք: Դուռը թակելը խորհրդանշում է հոգևոր օրհնություններ ստանալու մեր փափագի անկեղծությունն ու լրջությունը: Դուռը թակելը մատնանշում է մեր վճռականությունը, հետևողականությունը և Հորից հոգևոր օրհնու-

յուններ ստանալու մեր անդադար խնդրանքի մեջ հարատևելը: Սա ցույց է տալիս, որ Աստված մեր կյանքում առաջին տեղն է գրավում, և որ ամեն բանից առավել հոգևոր օրհնություններ ենք փափագում (Գուկ. 11:5-13): Երբ այս պայմանները բավարարվում են, մեր Երկնավոր Հայրը տալիս է մեզ այն, ինչի կարիքը ունենք (Մատթ. 7:11):

Այնուհետև Հիսուսը Լեռան քարոզը (Մատթեոս 5-7 գլուխները) և հոգևոր օրհնություններ խնդրելու, փնտրելու և դրանք ստանալու համար դուռը թակելու պատվերը ամփոփում է մեկ համարով՝ Մատթ. 7:12-ով: Այլ խոսքով՝ Հիսուսն ասում է մեզ. «Եթե ուզում ենք Աստծո չափանիշների համաձայն ապրել և Նրանից օգնություն ենք խընդրում, պետք է կարողանանք այս համարի խոսքերի համաձայն ապրել, այսինքն՝ ուրիշների հետ վարվել այնպես, ինչպես ուզում ենք, որ ուրիշները մեզ հետ վարվեն»:

Նման ուսմունքի կարող ենք հանդիպել նաև այլ մշակույթների և կրոնների մեջ, ինչպիսիք են՝ հրեականությունը, հինդուիզմը և բուդդայականությունը: Տարբերությունն այն է, որ այդ մշակույթներում այս գաղափարախոսությունը բացասական իմաստով է ներկայացված. «Այն, ինչ չեք ուզում, որ մարդիկ անեն ձեզ, դուք մույնպես իրենց մի՛ արեք», կամ. «Այն, ինչ ատում եք, ուրիշներին մի՛ արեք»: Քանի որ չենք ուզում, որ մարդիկ մեզ չարիք հասցնեն կամ ատեն ու վնասեն մեզ, ապա մենք մույնպես չպետք է նրանց այդպես անենք: Այսինքն՝ քանի դեռ մարդը ակտիվորեն ուրիշներին վնաս չի հասցնում կամ նրանց չարիք չի ցանկանում, կամ նրանց պատահած չարիքի վրա չի ուրախանում, ուրեմն անձը մաքուր է օրենքի առջև:

Այնուամենայնիվ, Տեր Հիսուսի սովորեցրածը շատ տարբեր է: Բավարար չէ ուրիշներին չվնասելը, չարիք չցանկանալը կամ մույնիսկ նրանց պատահած չարիքի վրա չուրախանալը: Բավարար չէ ինչ-որ մեկին անարդարացիորեն չդատապարտելը: Հիսուսի սովորեցրածը շատ տարբեր էր նրանց սովորեցրածից. «Լսել եք, որ նախնիներին ասվեց...: Բայց ես ձեզ ասում եմ...»: Հիսուսը մեզ չի սովորեցնում ձեռքերը ծալել ու ասել. «Ես աստվածավախ եմ, ոչ ոքի չեմ վնասել,

ոչ ոքի չարիք չեմ ցանկացել, նույնիսկ որևէ մեկին պատահած չարիքի համար չեմ ուրախացել»։ Հիսուսը ասում է մեզ, որ եթե ակտիվորեն բարիք չգործենք, ապա խախտած կլինենք Աստծո պատվիրանը (Մատթ. 7:12):

Բավարար չէ հեռվից հետևել, թե ինչպես է աշխարհը քանդվում, չնայած մենք չենք դրա պատճառը, բայց եթե ակտիվորեն չենք շարժվում ինչ-որ կարիք լրացնելու, խնդիր լուծելու, կյանքը բարելավելու, աշխարհը ապրելու համար ավելի լավ վայր դարձնելու, եղբորը կամ քրոջը օգնության ձեռք մեկնելու, ճիշտը անելու, Տիրոջը ծառայելու մեջ, ուրեմն պասսիվ ենք: Ճշմարիտ սերը պասսիվ չէ, այլ չափազանց ակտիվ: Երբ անձը Ճշմարտապես սիրում է, Նա իր շրջապատի օգտի համար ինչ-որ բան է նախաձեռնում: Հիսուսը չասաց ոչ ոքի չվնասենք, այլ բարիք անենք:

Կարևոր է նաև նկատել, որ եթե մեր սերը ճշմարիտ է, ապա մենք բարիք կանենք առանց նայելու ուրիշների արածներին կամ չարածներին: Մենք չպետք է բարիք գործենք, քանի որ այլ մարդիկ բարիք են գործում: Բարիք գործելը պայմանավորված չէ ուրիշների արարքներով, այլ իմ ցանկությամբ, թե ինչպես եմ ուզում, որ մարդիկ ինձ հետ վարվեն, նույնիսկ՝ եթե այդպես չվարվեն: Աստված կատարյալ օրինակ թողեց: Նա Իր Որդուն չուղարկեց մարդկանց, քանի որ նրանք բարի են: Նա Իր Որդուն տվեց, երբ մարդը Աստծուն փոխադարձ տալու ոչինչ չուներ: Ճշմարիտ քրիստոնյան պետք է այս չափանիշի համաձայն ապրի՝ ըստ ոսկե կանոնի: Արդյոք ակտիվ ենք: Արդյոք բարիք անելու հարցում նախաձեռնող ենք: Բավարար չէ չարիք չանելը: Եթե ակտիվորեն բարիք չենք գործում, խախտում ենք Ոսկե կանոնը և այդպիսով անհնազանդ ենք լինում Աստծո պատվիրանին:

Բաֆֆի Չափարյան



Ազատագրված բանտարկյալը

Շատ տարիներ առաջ Քեմբլ անունով անգլիացի մի վաճառական Եթովպիա գնաց առևտրական գործով: Տեղական ոստիկանությունը կասկածեց, որ այս մարդը լրտես է, ուստի ձերբակալեց նրան ու բանտարկեց Մագդալայի բերդի գնդանում: Երկար կշռադատելուց հետո Անգլիայի կառավարությունը հասկացավ իրողությունը և պահանջեց Եթովպիայի կառավարությունից անմիջապես ազատ արձակել բանտարկյալին, սակայն Եթովպիայի թագավորը՝ Թիողորը, ամբարտավանությամբ մերժեց գոհացնել այս պահանջը: Ուստի Անգլիայի կառավարությունը որոշեց բռնի ուժ գործադրել այս ազատագրությունը հնարավոր դարձնելու համար: Լավագույն զինվորներից 10 000-անոց բանակ կազմվեց, և զրահավորները ճանապարհ ընկան դեպի Եթովպիայի ջրերը:

Որոշ ժամանակ անց հասան բերդի ծովեզերքին և անմիջապես ցամաք դուրս գալով՝ կիզիչ արևի տակ սկսեցին մագլցել բերդը, որ գտնվում էր լեռան գագաթին: Որոշ պատրաստություններից հետո նրանք վայրագաբար հարձակվեցին բերդի վրա, փշրեցին դուռը, մտան գնդանը, դուրս հանեցին բանտարկյալին: Նրան իրենց ուսերին առած՝ իջեցրին լեռն ի վայր ու առաջնորդեցին հրամանատարի մոտ: Այս գործողությունը 25 միլիոն դոլարի ծախս պահանջեց Անգլիայի կառավարությունից, որ համարժեք է ներկայիս 250 միլիոնին: Անգլիայի կառավարությունը մեծ զին վճարեց իր քաղաքացու համար և առանց վարանելու՝ այդ գումարը ծախսեց նրան ազատելու համար:

Եթովպիայի թագավորի արածի պես սատանան էլ մեզ է ձերբակալել ու գերի դարձրել իրեն: Նա արգելափակել է մեզ գնդանում, բայց Աստված մեծ զին վճարեց մեզ համար և ամբողջ Երկինքը ոտքի հանեց ու Իր Սիածին Որդուն հրամանատար նշանակեց, որպեսզի մեզ ձերբազատի սատանայի ճիրաններից: Տեր Հիսուսը հարձակվեց սատանայի ամբողջի վրա, պատերազմի մեջ վիրավորվեց ու ընկավ, սակայն Իր թափած արյունը բացեց ամբողջի դռները, ու

բյուրավոր գերիներ ազատագրվեցին: «Աստված Իր սերը մեզ հայտնեց դրանով, որ երբ մենք դեռ մեղավոր էինք, Քրիստոսը մեռավ մեզ համար» (Հռոմ. 5:8): Ազատագրման կարիք ունեցող ուրիշ գերիներ էլ կան մեր ազգակիցների մեջ, որոնք փրկության կարոտ են և որպես սատանայի գերության մեջ գտնվողներ՝ ուզում են դուրս գալ այդ զնդանից:

Քաղված՝ «Օրհնաբեր նոնենին» գրքից

Հավատացյալի կյանքը

Ա Պետրոս 1:3-25

Քրիստոնեական եկեղեցու անդամ կամ անվանական քրիստոնյա լինելը մարդուն քրիստոնյա չի դարձնում: Ճշմարիտ քրիստոնյան նա է, ով ոչ միայն հավակնում է Քրիստոսի հետևվորդը լինելուն, այլև իր կյանքով արտացոլում է Քրիստոսին: Ճշմարիտ հավատացյալի ապրած կյանքն է, որ նրան առանձնացնում է այս չար աշխարհում: Ճշմարիտ հավատացյալի կյանքը պետք է ունենա երեք առանձնահատկություն.

ՀՈՒՅՍՈՎ ԼԻ ԿՅԱՆՔ (Ա Պետ. 1:3-12)

Այս աշխարհը հարատև հույս չի տալիս: Որպես մեղավորներ՝ մենք գերեզմանից այն կողմ այլևս հույս չունենք: Մենք մահվան էինք դատապարտված և անհույս կորած էինք: Բայց Հիսուսն Իր ողորմությամբ վճարեց մեզ համար՝ կրելով մեր մեղքերի պատիժը:

«Որ այն ժամանակ առանց Քրիստոսի էիք... հույս չունեիք և անաստված էիք այս աշխարհում, բայց հիմա Հիսուս Քրիստոսի ձեռքով դուք, որ ժամանակով հեռավոր էիք, մոտավոր եղաք Քրիստոսի արյունով» (Եփես. 2:12-13):

Հավատացյալը կենդանի հույս ունի, որովհետև կենդանի Փրկիչ ունի: Այդ հույսը ոչ միայն կենդանի է, այլև հարատև: Երբ վերջը-

տին ծնվում ենք, մեր մեջ ծնվում է անապական, անմար ու անքիծ երկնային ժառանգության հույսը:

ՍՐԲՈՒԾԱՆ ԿՅԱՆՔ (Ա Պետ. 1:13-21)

Երանելի հույսը մեզ պետք է սուրբ կյանքի մղի:

Ա Պետ. 1:16-ում գործածված «սուրբ» բառը չի նշանակում անմեղ կատարելություն. դա այս կյանքում հնարավոր չէ: Ա Հովհ. 1:8-10-ը բացատրում է, որ «սուրբ» նշանակում է «առանձնացված՝ Աստծո համար»: Հավատացյալի կյանքը պետք է արտացոլի Աստծո սուրբ նկարագիրը: Մենք պետք է մեր բոլոր գործերի և խոսքերի մեջ սուրբ լինենք, գատվենք աշխարհի ապականված համակարգից, որից Քրիստոսն Իր մահով մեզ ազատեց: Մենք աշխարհում ենք, բայց աշխարհից չենք: Սա չի նշանակում մեկուսանալ մեղավորներից: Մենք պետք է Բարի լուրը տարածենք, սակայն մեր առնչություններում չպետք է հաղորդ լինենք նրանց մեղքերին կամ արդարացներն նրանց: Մենք պետք է մեր կյանքով ցույց տանք, որ Աստծո գավակներ ենք: Այն պահին, երբ նմանվում ենք աշխարհին, թուլանում է մեր վկայությունը. ինչո՞ւ պետք է անհավատներն ուզենան քրիստոնյա դառնալ, եթե մեր կյանքում չեն տեսնում դրական փոփոխություն և տարբերություն:

Սուրբ լինել չի նշանակում անգործ, ոչ ակտիվ վիճակում հայտնվել: Այն հեշտ կամ ինքնըստիմքյան չի տրվում մեզ: Հարկավոր է պայքարել դրա համար:

Սուրբ կյանք ապրելը ոչ թե ընտրություն է, այլ պատվեր: Այսօր պահանջվում է, որ քրիստոնյաներն ապրեն առանձնացած, սուրբ, նվիրված՝ ի փառս Աստծո: Շատ քրիստոնյաներ այնքան աշխարհիկ են, որ նրանց վկայությունը (եթե ունեն) անիմաստ է: Եթե փրկության վկայությունը չի հիմնավորվում համապատասխան կյանքով, ապա այն ավելի շատ վնասում է, քան օգուտ տալիս:

ՆԵՐԿԱՇՆԱԿՈՒԾԱՆ ԿՅԱՆՔ (Ա Պետ. 1:22-25)

Փրկությունը մեզ կենդանի հույս, սուրբ կյանք ապրելու փափագ և Աստծո ժողովրդի հետ հրաշալի հաղորդակցություն է տալիս: Պետ-

րոս առաքյալը մեկ անգամ ևս մեզ հիշեցնում է, որ քանի որ մենք Քրիստոսով վերստին ծնունդ ենք առել և Աստծո ընտանիքի անդամ ենք դարձել, պետք է սիրենք այնպես, ինչպես Նա բոլորիս սիրեց: Այս նոր ծնունդը մեր կյանքի մեջ նաև սեր է բերում, որը ոչ թե ընտրություն է, այլ քրիստոնեական կյանքի մի մաս: Իսկական, անձնվեր քրիստոնեական սերը ներդաշնակություն է տալիս եկեղեցուն և հավատացյալներին:

Դավիթ թագավորը գրում է.

«Ինչ բարի ու ցանկալի է, որ եղբայրներն իրար հետ մեկտեղ բնակվեն» (Սաղ. 133:1):

Աստվածաշունչն ասում է, որ մեր փրկության արտաքին ապացույցը միմյանց հանդեպ ունեցած սերն է: Խոսքը ոչ թե ընկերական սիրո կամ սիրահարվածության, այլ անաղարտ, ոչ եսասիրական, քրիստոնեական սիրո մասին է, որն ինքնըստինքյան չի տրվում մեզ, մեր մարդկային բնության մի մասը չէ, այն յուրահատուկ սեր է, որը գալիս է կամ պետք է գա նոր ծնունդով:

«Սուրբ Հոգու միջոցով ձեր անձերը սրբելով ճշմարտության հնազանդությամբ, անկեղծ եղբայրասիրության համար, մաքուր սրտով իրար սերտ սիրեցե՛ք՝ վերստին ծնված լինելով ոչ թե ապականության սերմից, այլ անապական սերմից, Աստծո կենդանի և հավիտենական խոսքով» (Ա Պետ. 1:22-23):

Սեր շրջապատի մարդիկ ոչ միայն մեր խոսքերից, այլև մեր սիրուց կիմանան, որ Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն ենք:

«Նոր պատվիրան եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք, ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք: Սրանով կգիտենան ամենքը, թե իմ աշակերտներն եք, եթե միմյանց նկատմամբ սեր ունենաք» (Հովհ. 13:34-35):

Քրիստոնեական կյանքը հույսով, սրբությամբ և ներդաշնակությամբ լի կյանք է: Այդ երեքից ոչ մեկը չպիտի պակասի:

Հովսեփ Հովսեփյան

Ինձ մոտ բերեք նրան

Աստծո զավակներից մեկը մի օր շատ նեղված էր իր անապաշխար եղբոր համար: Կիրակի առավոտյան հոգևոր ժողովի գնաց: Իր խնդիրը սաստիկ ծանրացել էր սրտի վրա: Օտար քարոզիչ էր եկել այդ օրը և բեմից Մարկոս 9-րդ գլուխը կարդաց: Խոսքն այնքան լրջորեն ու զգացումով էր կարդացվում, որ Աստծո զավակն իր վիշտը բոլորովին մոռացավ: Երբ 18-րդ համարին հասավ, քարոզիչը շեշտելով կարդաց այս տողը. «Ինձ մոտ բերեք նրան»:

Այս երեք բառերը մեծ զորությամբ հասան նրա սրտի խորքը: Նա ժողովի մնացած մասը չկարողացավ լսել: Աստծուց պատգամ էր ուղղվել իրեն: Սուրբ Հոգին այս խոսքերով խոսել էր իր հետ. «Ինձ մոտ բերեք նրան»: Հենց այնտեղ իր բոլոր հոգսերը Տիրոջ վրա դրեց սովորականից բոլորովին տարբեր կերպով: Հավատքով և աղոթքով իր եղբորը շարունակ տարավ ողորմած Փրկչի մոտ, որ պատրաստ ու կարող է օգնելու, ինչպես որ անում էր, երբ երկրի վրա էր 20 դար առաջ: Բեռն ընկավ նրա վրայից, ու նա վստահեց, որ Հիսուսն ինչ-որ ձևով Իր ուզած ժամանակին կպատասխանի: Աղոթքի տեղից գնաց ոչ թե տխուր երեսով, այլ անուշ, հանդարտ վստահությամբ: Նա Հիսուսի ձայնն էր լսել, Նրա մոտ էր գնացել, իր եղբորն էլ Նրա մոտ էր տարել:

Երբ հասավ Աստծո ժամանակը, նա իր աղոթքի պատասխանը ստացավ: Իր սիրելի եղբայրը եկել էր ու դավանում էր Քրիստոսին՝ իբրև անձնական Փրկչի:

Ո՛վ ընթերցող, արդյոք ունե՞ս որևէ ցավ, վիշտ, փափագ, հոգս, Հիսուսին բեր: Հավատքով, աղոթքով Նրա մոտ բեր: Աղոթքիդ պատասխանը ստանալով՝ ուրախացի՛ր, և թող Տերը փառավորվի:

Քաղված՝ «Ընտիր ժողովածու՝ հոգևոր պատմությունների» գրքից

Հիսուսը՝ աշխարհի լույսը

Նովի. 8:12-ում Հիսուսն ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. նա, որ Ինձ կհետևի, խավարի մեջ չպիտի քայլի, այլ՝ կյանքի լույսը պիտի ունենա»:

Պատկերացրեք մի տուն կամ սենյակ, որի ներսում անթափանց խավար է, կատարյալ խավար, ու էլեկտրականության կամ լույսի որևէ աղբյուր չկա: Ի՞նչ կկոչեիք այն մարդուն, ով փորձեր այդ սենյակի խավարը քամիով ցրել: Առնվազն անմիտ կկոչեիք, այնպես չէ՞: Եվ թեկուզ նա առավտոից մինչև ուշ գիշեր քրտնաջան աշխատեր, թեկուզ հավատար իր կատարած գործի արդյունքին, միևնույնն է, ոչինչ չէր ստացվելու. ընդհակառակը՝ քառսային վիճակ էր ստեղծվելու՝ քամին ամբողջ կահ-կարասին կոտրելու էր:

Բնության չորս տարրերը բոլորս գիտենք՝ քամին, ջուրը, կրակը և հողը: Քամին թեև դրանցից մեկն է, սակայն զորություն չունի խավարի վրա:

Եթե մարդը փորձի երկրորդ տարրով խավարը ցրել, դույլերով ավազ, հող տեղափոխի ու լցնի ամբողջ սենյակը՝ մտածելով, թե խավարին տեղ չթողնելով՝ կհաղթի նրան, նմանապես ոչ մի արդյունքի չի հասնի. խավարը մեկ միլիմետր անգամ չի նահանջի:

Մեր բարեկամը, լինելով համառ, շուտ չհանձնվեց և ուզեց օգտագործել ջուրը: «Այն ուժեղ տարր է, խավարին հաստատ կքշի-կտանի», - մտածեց նա: Կարծում եմ՝ պատկերացնում եք, թե ինչ կատարվեց, երբ նա փորձեց ջրով հեռացնել խավարը:

Սենյակից խավարը հեռացնելու միակ միջոցը կրակն է, լույսն է: Երբ լույսը գալիս է, խավարը հեռանում է, այն էլ՝ անմիջապես, առանց հակաճառելու, առանց դիմադրելու, առանց հետաձգելու:

Վերոնշյալը ծիծաղելի պատմություն է, սակայն դա մեր իրականությունն է:

Այս պատմության մեջ խավարով լի տունը կամ սենյակը խորհրդ-

դանշում է մեր մեղավոր սիրտը, մեր մեղավոր կյանքը: Աստվածաշունչը մեղքը նմանեցնում է թանձր խավարի հետ ու ասում է, որ բոլորը մեղանչեցին ու զրկված են Աստծո փառքից (Հռոմ. 3:23):

Մարդկությունը մեղանչելուց հետո փորձեց այդ խավարը տարբեր միջոցներով հեռացնել: Առաջին փորձն արեցին Ադամն ու Եվան՝ թզենու տերևների միջոցով:

Աշխարհն այսօր մեղքի խավարը հեռացնելու հզոր տարբեր է առաջարկում, օրինակ՝ գիտությունը: Գիտությունն ասում է՝ չտեսնված, չապացուցված իրողությունը գոյություն չունի. Աստծուն, սատանային, դրախտը, դժոխքը, հավիտենական կյանքը ոչ ոք չի տեսել, գիտականորեն չի ապացուցվել, ուրեմն գոյություն չունեն: Եվ շատ մարդիկ հետևում են գիտության բռնած ուղղությանը՝ ասելով, թե դա է իրենց լույսը: Այո՛, դա լույս է, որը նրանց կհասցնի մինչև գերեզման, իսկ դրանից այն կողմ կհանգչի: Եվ նրանք կմնան խավարի մեջ, որտեղ կա լաց ու ատամների կրճտոց: Սակայն երանելի է այն մարդը, ով ունի այն Լույսը, որն իրեն ոչ միայն ապահով կհասցնի մինչև գերեզման, այլ իր հետ կմնա նաև գերեզմանից այն կողմ:

Այո՛, համաձայն ենք, որ գիտությունը լույս է, սակայն գիտությունը մարդու մեղավորության հարցի լուծումը չունի: Ոչ մի վիրաբույժ չի հայտարարել, թե կարող է վիրահատել ու մարդու սրտից մեղքը հեռացնել: Ոչ մի հոգեբան, փիլիսոփա, մանկավարժ, ուսուցիչ և նույնիսկ կրոնավոր չեն կարողացել ասել, որ իրենք կարող են մարդու սրտից մեղքը հեռացնել: Եթե ասեն, սուտ ասած կլինեն:

Աշխարհն ասում է՝ մարդասիրությունը, բարեգործությունը, Տասը պատվիրանները պահելը կօգնեն այդ խավարը հեռացնելու գործում: Սակայն դարձյալ ոչ մի օգուտ. այս բոլորը նման են հողին, քամուն, ջրին և մեր կյանքից խավարը հեռացնելու գործությունը չունեն...

Միակ լուծումը Հիսուս Քրիստոսն է, ով ասաց. «Ես եմ աշխարհի լույսը. նա, որ Ինձ կհետևի, խավարի մեջ չպիտի քայլի, այլ՝ կյանքի լույսը պիտի ունենա»:

Խավարը, որի մասին Հիսուսը խոսեց, մեղքի խավարն է, հոգևոր սոգիտությունն է, մահից վախենալու խավարն է...

Եթե այսքան տարիներ ձեզ համար խավարը հեռացնող լույս ընտրել եք գիտությունը, փիլիսոփայությունը կամ «իզմեր»-ից որևիցե մեկը՝ հումանիզմը, աթեիզմը, ազնու-տիցիզմը և այլն, կամ դրանց քրիստոնեական համարժե-քը՝ բարեգործությունը, Տասը պատվիրանները պահելը, դուք նման եք այդ խեղճ մարդուն, ով փորձում էր իր տնից խավարը ջրով, հողով և քամիով հեռացնել... Դուք պարզա-պես ինքներդ ձեզ խաբում եք ու անմիտի կամ անխելք մարդու անուն եք վաստակում, ինչպես վաստակեց Հիսու-սի՝ երկու տուն կառուցողների առակում ավագի վրա կա-ռուցողը:

Հիսուսը անմիտ կոչեց նրան, ով իր տունը ավագի վրա կառուցեց. քամիները եկան, ջրհեղեղներ, անձրևներ եկան ու հարվածեցին այդ տանը, ու այն կործանվեց: Այսպիսի տուն կառուցողը նման է հողով, քամիով, ջրով խավարը հեռացնողին: Իսկ նա, ով իր տունը կառուցեց վեմի՝ Հիսու-սի խոսքերի վրա, նրա տունը կանգուն մնաց: Այսպիսի տուն կառուցողը նման է լույսով խավարը հեռացնողին: Նրա կառուցածը հավիտյան պիտի մնա:

Գուցե հոգնել եք հոգևոր պրպտումներից, ձեր ուժերով ձեր կյանքը լուսավորելուց: Ընտրե՛ք լույսը, ընտրե՛ք Քրիս-տոսին, քանի որ Նա ասաց. «Ինձ մո՛տ եկեք, բոլոր հոգ-նածներ և բեռնավորվածներ, և Ես ձեզ հանգստություն կտամ»:

Դիմե՛ք Նրան՝ ասելով. «Դու, որ խավարից լույս ծագեց-րիր, ասացիր՝ թող լույս լինի, ու լույս եղավ, ծագի՛ր իմ սրբ-տուն ու ջնջի՛ր իմ մեղքերը»:

Վարդան Սարգիսյան